

ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

ԲԼՈՔՀԵՅՏԻ ԵՎ ԿՐԻՊՏՈԱՐԺՈՒՅԹՆԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԱԶԳԱՅԻՆ
ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՏԱՐԲԵՐ ՈԼՈՐՏՆԵՐՈՒՄ

<https://doi.org/10.59982/18294359-25.1-ks-02>

Կարինե Նորիկի Սարգսյան

դռնպ.թ., դոցենտ

ՀԵՀ, Կառավարման ամբիոն

karinesarg@yahoo.com

Հայկ Արսենի Դաղնունց

Ուսանող

ՀԵՀ, Կառավարման և մարքեթինգի ֆակուլտետ

haykdaghunts@gmail.com

Ամփոփագիր

Ներկայում բլոքեյն տեխնոլոգիաներն ու կրիպտոարժույթները վերափոխում են ազգային տնտեսությունների գործելակերպն ու բովանդակությունը՝ առաջարկելով արագ, անվտանգ, թափանցիկ և անփոփոխելի տեղեկատվության փոխանակման հնարավորություններ: Դրանք կիրառվում են տնտեսության բոլոր ոլորտներում, այդ թվում՝ ֆինանսական համակարգում, կրթության ոլորտում, ընտրական գործընթացներում, տուրիզմում, արդյունաբերության տարբեր ոլորտներում՝ նպաստելով գործառնական արդյունավետության և վստահության բարձրացմանը: Կրիպտոարժույթների ինտեգրումը տնտեսության մեջ հնարավորություն է ստեղծում ֆինանսական ներառականության ամրապնդման, միջազգային գործարքների դյուրացման և դրամավարկային անկախության ուղղությամբ: Օրինակները են Սալվադորից և Արգենտինայից վկայում են, որ ճիշտ կառավարումն ու կանոնակարգումը կարող են կրիպտոարժույթները դարձնել տնտեսական կայունության ու զարգացման գործիք: Միևնույն ժամանակ, կարևորվում են նաև տեխնոլոգիական ոիսկերն ու իրավական հստակ կարգավորումների անհրաժեշտությունը: Անհերքելի է, որ բլոքեյնի և կրիպտոարժույթների կիրառումը կարող է էական ազդեցություն ունենալ ապագայի տնտեսության ձևավորման վրա՝ պայմանով, որ ներդրումները և նորարարությունները ուղեկցվեն պատասխանատու և հեռանկարային քաղաքականությամբ:

Նման մոտեցումը նաև խթանում է նոր աշխատատեղերի ստեղծումը, նորարարական էկոհամակարգերի զարգացումը և մասնավոր հատվածի ակտիվ ներգրավվածությունը՝ նպաստելով տնտեսական աճին և սոցիալական կայունությանը: Ավելին, այն հնարավորություն է տալիս զարգացնել թվային գրագիտությունը, ներդնել նոր բիզնես մոդելներ և խթանել միջազգային համագործակցությունը:

ՏԱՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Հիմնաբառեր. Ֆինանսական տեխնոլոգիաներ, բլոքեյն, կրիպտոարժույթներ, ապակենտրոնացում, թվային արժույթ, թվային վերափոխում

Ներածություն

Վերջին տարիներին բլոքեյն տեխնոլոգիան և կրիպտոարժույթները դարձել են գլոբալ տնտեսության կարևորագույն գործիքներ: Բլոքեյնը, իր ապակենտրոնացված ու անվտանգ արդյունավետ համակարգով, վերափոխում է մի շարք ոլորտներ՝ ֆինանսական ծառայություններից մինչև պետական կառավարման համակարգեր, մեծացնելով գործարքների արդյունավետությունն ու թափանցիկությունը: Կրիպտոարժույթները, հատկապես Բիթքոինը («Bitcoin») և Էթերիումը («Ethereum»), լայնորեն օգտագործվում են, սակայն դրանց ինտեգրումը ազգային տնտեսությունների մեջ առաջացնում է նաև տնտեսական և իրավական մարտահրավերներ, այդ թվում՝ կարգավորման և վերահսկման համատեքստում, ինչով էլ պայմանավորված է դրանց շարունակական ուսումնասիրությունն ու արդիականությունը:

Սույն հետազոտության նպատակն է բացահայտել ֆինանսական տեխնոլոգիաների վերափոխիչ դերը՝ բլոքեյն տեխնոլոգիաների զարգացման պայմաններում, որոնք ձևավորում են ապագայի տնտեսությունը:

Հետազոտության նպատակին համապատասխան սահմանվել են հետևյալ խնդիրները՝

- ուսումնասիրել բլոքեյն տեխնոլոգիաների կիրառության ազդեցությունը ազգային տնտեսության տարբեր ոլորտներում,
- վերլուծել կրիպտոարժույթների ազդեցությունը, հնարավորություններն ու սպառնալիքները տնտեսության տարբեր ոլորտների վրա,
- ուսումնասիրել ազգային տնտեսություննում վերջիններիս միջոցով տնտեսական մրցունակության բարձրացման հնարավորություններն ու ուղղությունները:

Սույն հետազոտության ընթացքում կիրառվել են անալիզի և սինթեզի, սիմովիացիոն և մոդելավորման մեթոդները:

Ե՛վ բլոքեյն (blockchain) տեխնոլոգիաները, և՝ կրիպտոարժույթը (cryptocurrency) նորարարական տեխնոլոգիաներ են, որոնք մեծ ազդեցություն են ունենում տարբեր ոլորտներում, հատկապես ֆինանսական համակարգում:

Բլոքեյնը տվյալների պահպանման և փոխանակման հատուկ մեխանիզմ է: Այն բաշխված և անվտանգ հաշվառման համակարգ է, որտեղ տեղեկատվությունը պահպում է բլոկների տեսքով, որոնք իրար հետ կապված են շղթայական սկզբունքով (այստեղից է՝ անվանումը՝ «բլոքեյն», ինչը նշանակում է «բլոկների շղթա»): Այս համակարգը նախատեսված է տվյալների փոփոխություններից պաշտպանվելու համար՝ այն դարձնելով անփոփոխելի: Տվյալները չեն պահպում կենտրոնացված սերվերներում, այլ միաժամանակ բազմաթիվ հանգույցներում (nodes), ինչը բարձրացնում է համակարգի անվտանգությունը:

ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Կրիպտոարժույթները թվային կամ վիրտուալ արժույթներ են, որոնք օգտագործում են բլոքչեյնի տեխնոլոգիան որպես հիմք: Առավել հայտնի կրիպտոարժույթը բիթքոինն է (Bitcoin), բայց կան նաև բազմաթիվ այլ տեսակներ, ինչպես օրինակ՝ Էթերիումը (Ethereum), Ռիփլ (Ripple), և այլն: Կրիպտոարժույթների հիմնական առանձնահատկությունը կայանում է նրանում, որ վերջիններս չեն վերահսկվում կենտրոնական բանկերի կամ կառավարությունների կողմից: Դրանք հիմնված են գաղտնագրային (կրիպտոգրաֆիկ) մեթոդների վրա, ինչը ապահովում է անվտանգությունն ու անանունությունը գործարքների ժամանակ:

Այս տեխնոլոգիաները հնարավորություն են տալիս անցկացնել ֆինանսական գործարքներ՝ առանց միջնորդների (օրինակ՝ բանկերի), ինչը արագացնում և էժանացնում է գործընթացները [Satoshi, 3-5]:

Ժամանակից աշխարհում կրիպտոարժույթների դերը գնալով անքննելի է դառնում: Հետևելով ոլորտի վերջին զարգացումներին, ֆինանսական տեխնոլոգիաների ոլորտի առաջավոր մասնագետներ Արտյոմ Հարությունյանը՝ «Web3 Armenia Foundation» հիմնադիր¹, Զոն Այլանջյանը (John Ailanjian)² CFA ներդրող, նույնիսկ պնդում են, որ այն ֆինանսական կազմաբությունները որոնք մոտ ապագայում չկատեն զբաղվել Բլոքչեյն տեխնոլոգիաների և կրիպտոարժույթների ներդրմամբ, դուրս կմղվեն շուկայից:

Կրիպտոարժույթները դրական ազդեցություն ունեն ազգային տնտեսությունների վրա, խթանելով ֆինանսական «ներառականությունը» և թույլ տալով «ոչ բանկային մարդկանց» մասնակցել ֆինանսական համակարգին: Նրանք բարելավում են տնտեսական աճը, վարկերն ու վճարային համակարգերը, ինչը օգնում է փոքր բիզնեսներին: Կրիպտոարժույթները ապահովում են տնտեսական անկախություն, պաշտպանում քաղաքական ռիսկերից, և բարձրացնում ֆինանսական կրթությունը, ինչը թույլ է տալիս բնակչությանը ավելի լավ որոշումներ կայացնել:

2021 թվականի սեպտեմբերին Էլ Սալվադորը առաջին երկիրը դարձավ, որն ընդունեց Բիթքոինը որպես օրինական վճարամիջոց: Երկրի տնտեսությունը լրաց խնդրների մեջ էր՝ կախված լինելով ԱՄՆ-ից և դոլարային փոխանցումներից, որոնք կազմում էին ՀՆԱ-ի 20%-ը: Բնակչության մեծ մասը չէր օգտվում բանկային ծառայություններից, ինչը սահմանափակում էր տնտեսական գործունեությունը: Սակայն ամեն ինչ փոխվեց երբ բիթքոինը պաշտոնական արժույթ դարձավ, իսկ «Chivo» դրամապանակը թույլ տվեց քաղաքացիներին իրականացնել բիթքոինով վճարումներ: Այս փոփոխությունը հանգեցրեց նաև զբոսաշրջության 30%-ի աճի [Nambiampurath, Baird]: 2024 թվականի մարտից սկսած, Էլ Սալվադորը շարունակաբար ամեն օր իր ազգային գանձարանին ավելացնում է մեկ բիթքոին, որը երկրի ընդհանուր բիթքոինային պահուածը հասցրել է 5,851 BTC, 400 միլիոն դոլար արժողությամբ

¹ Արտյոմ Հարությունյան՝ «Web3 Armenia Foundation» հիմնադիր և Զոն Այլանջյան (John Ailanjian)² CFA investor բանախոսությունները WCIT միջազգային տեխնոլոգիական համաժողովին, WCIT 2024-DigiTec, 07.10.2024

ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

[Mikai]: Այս ռազմավարությամբ երկրի նախագահ Նայիր Բուկելեն ցանկանում է հասցնել զրոյի երկրի արտաքին պարտքը և ձեռք բերել լիովին ֆինանսական անկախություն:

Արգենտինան արդեն մի քանի տասնյակ տարի պայքարում է ինֆլյացիայի դեմ, բայց վերջին ճգնաժամը վերջին պատմության մեջ ամենավատն է: Երկրի ինֆլյացիայի մակարդակը 100%-ից ավելի է, ինչը դժվարացնում է քաղաքացիների համար պահպանել գնելու կարողությունը/գնողունակությունը: Այսինքն, եթե արգենտինական պետոն շարունակաբար արժեզրկվում է, մարդիկ փնտրում են միջոցներ իրենց ակտիվները պաշտպանելու համար ինֆլյացիայի ազդեցությունից: Բիթքոինը առաջարկում է լուծում այս խնդրի համար, քանի որ այն ապահովում է ոչ կենտրոնացված և վստահության կարիք չունեցող համակարգ՝ 21 միլիոն մետադրամների սահմանափակ մատակարարումով: Արգենտինայում բազմամյա ֆինանսական ճգնաժամեր և բարձր ինֆլյացիաներ են եղել, ինչը մեծապես ազդել է երկրի տնտեսության վրա: Երկիրը բախվել է գերկենսական ինֆլյացիայի (մինչև 100%-ի հասնող), արժույթի արժեզրկման և կառավարության նկատմամբ անվստահության: Ներկայումս քաղաքացիները լայնորեն օգտագործում են բիթքոին և ստեյբլՔոիններ (USDT և USDC)¹ որպես արժութային պաշտպանություն, քանի որ դրանք ավելի կայուն են, քան պետոն:

Կրիպտոարժույթները թույլ տվեցին բնակիչներին շրջանցել պետական վերահսկողությունը և հեշտացնել միջազգային գործարքները: Ներկայումս, Արգենտինան իր կրթական ծրագրերում ներառել է կրիպտոարժույթների ոլորտը կրթելով երեխաներին: Էլ Սալվադորն ու Արգենտինան ապացուցն են այն բանի, որ կրիպտոարժույթները կարող են լինել տնտեսական զարգացման նոր ուղիներ և լինել ավելի շահավետ քան ավանդական ֆինանսական համակարգը [Goldbach, Nitsch, 3-4]:

Բլոքեյն տեխնոլոգիան իր բազմազան կիրառություններով կերտում է նոր դարաշրջան տարբեր ոլորտներում, այդ թվում՝ ազդեցություն ունենալով թե՝ տնտեսական և թե՝ սոցիալական ոլորտներում: Այս տեխնոլոգիան համարվում է ճկուն լուծում, որը կարող է բարելավել գործընթացները և ապահովել բարձր մակարդակի անվտանգություն:

Բլոքեյնը հիմնարար փոփոխություններ է մտցնում վճարային համակարգերում՝ թույլ տալով իրականացնել արագ, անվտանգ և ցածր ծախսերով գործարքներ: Այս հատկությունները հատկապես օգտակար են միջազգային վճարումների գործընթացում, որտեղ նվազեցվում են միջնորդական ծախսերը: Բացի այդ, կրիպտոարժույթների միջոցով իրականացվող ICO-ները (Initial Coin Offerings) նոր նախագծերի համար ֆինանսավորում հավաքելու հնարավորություն են տալիս, շրջանցելով ավանդական բանկային համակարգերը, ինչը մեծացնում է ֆինանսական արտոնությունները: Օրինակ՝ հայտնի Ripple բլոքեյնը նախատեսված է արագ և ցածր ծախսերով միջազգային վճարումների համար: Այն օգտագործվում է բանկերի և ֆինանսական

ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

հաստատությունների կողմից, որպեսզի հեշտացնի սահմանային վճարումները և նվազեցնի նրանց ծախսերը:

Բլոքեյնը կարող է մեծապես բարելավել դեմոկրատիայի և ընտրական գործընթացների թափանցիկությունը, նվազեցնելով կեղծիքների հնարավորությունը: Այն նաև հնարավորություն է տալիս իրականացնել դիստրիբյուտորային ծառայություններ, որոնք թույլ են տալիս օգտվողներին վերահսկել իրենց տվյալները հեռավար միջոցով: Voatz բլոքեյնի հիմնած համակարգը օգտագործվում է ընտրական գործընթացներում՝ ապահովելով ընտրությունների թափանցիկություն և անվտանգություն: Այն արդեն օգտագործվել է ԱՄՆ-ի մի քանի նահանգներում՝ ապահովելու հեռակա ընտրությունները:

Կրթության ոլորտում բլոքեյնը կարող է օգտագործվել ուսանողների նվաճումների և դիպլոմների հաստատման համար՝ ապահովելով դրանց իսկությունը և կանխելով կեղծումները: Այստեղ արդի է օգտագործել NFT-ների հատկությունները և հասնել զգայի հաջողությունների, քանի որ կեղծարարները չեն կարողանա կեղծել անձի փաստաթղթերը, դիպլոմները կամ որակավորման սերտիֆիկատները, որովհետև նրանք եզակի են և պահպանվում են հստակ և եզակի հասցեներով: Oribanak Blockcerts համակարգը թույլ է տալիս համալսարաններին և կրթական հաստատություններին ստեղծել և տալ թվային վկայականներ, որոնք գրանցվում են բլոքեյնում, ապահովելով դրանց իսկությունը:

Բլոքեյն տեխնոլոգիան կարող է լուծել մի շարք խնդիրներ տուրիզմի և տուրիստական ընկերությունների համար՝ ապահովելով արդյունավետություն, անվտանգություն և թափանցիկություն [Hosanagar, Wernach 5]: Տուրիստական ընկերությունները հաճախ ունենում են մեծ ծավալի անձնական և ֆինանսական տվյալներ, որոնք ենթակա են հաքերային հարձակումների և խարդախության: Բլոքեյնի միջոցով այդ տվյալները կարող են պահպել անվտանգ ցանցերում՝ անխախտելի և թափանցիկ ձևով, ինչը նվազեցնում է կիրերանվտանգության ռիսկերը: Հաճախակի խնդիրներից է ամրագրումների սխալ հաշվառումը կամ կեղծ տվյալների օգտագործումը: Բլոքեյնը թույլ է տալիս պահել ամրագրումների պատմությունը չփոփոխվող ցանցում, ինչը ապահովում է ճշգրտություն թե հաճախորդների և թե սպասարկող ընկերության համար: Oribanak, TON բլոքեյնը հնարավորություն է տալիս օգտագործել Toncoin՝ միջազգային տուրիստական վճարումների համար՝ նվազեցնելով փոխանակման կուրսերի կորուստները և վճարային հապաղումները: Դրանով կարող է հեշտացվել տուրիստների համար գների վճարումը՝ առանց տեղական արժույթի կամ բանկային բարդությունների:

Հիմնվելով սույն հետազոտության ընթացքում ուսումնասիրված տեխնոլոգիական լուծումների և դրանց արդյունավետության գնահատման վրա, կարող ենք փաստել, որ բլոքեյն տեխնոլոգիաներն ու կրիպտոարժույթները մեծ ներուժ ունեն տնտեսական և տեխնոլոգիական ոլորտներում [Tapscott & Tapscott, 32-58]: Քանի որ Հայաստանի Հանրապետությունում դեռևս չկա թե՛ իրավական, թե՛ տնտեսական կարգավորված

ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

դաշտ կրիպտոարժույթների համար, նախ և առաջ պետք է մշակել համապատասխան օրենսդրություն և կարգավորումներ՝ օգտվելով ոլորտի այնպիսի առաջատարների փորձից, ինչպիսին են՝ ԱՄԷ-ն և Սինգապուրը, որոնք կարողացել են իրենց պետությունը դարձնել ստարտափ-հաբեր բլոքեյնի և կրիպտոարժույթների համար՝ ներգրավելով ահեղի ներդրումներ, որի շնորհիվ կստեղծվեն հստակ ուղղություններ բլոքեյնի և կրիպտոարժույթների կիրառման համար՝ նպաստելով նախնառաջ երկրի տնտեսության և նրա տարրեր ճյուղերի զարգացմանը [World Economic Forum, *Singapore Case Study*, 4-9]:

Ընդհանրացնելով կատարված հետազոտության արդյունքները առանձնացնեք տնտեսության վրա ազդեցության համատեքստում բլոքեյնների և կրիպտոարժույթների ուժեղ և թույլ կողմերը, ինարավորություններն ու սպառնալիքները (տե՛ս աղյուսակ 1.):

Աղյուսակ 1.

ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ	ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ
<ul style="list-style-type: none"> Ապակենտրոնացում, Թափանցիկություն և անվտանգություն, Ֆինանսական ներառականությունը Նորարարական և տեխնոլոգիական ներուժը 	<ul style="list-style-type: none"> Գների անկայունություն, տատանողականության բարձր մակարդակ Իրավական կարգավորումների բացակայություն կամ ոչ բավարար մակարդակ Մասշտաբայնություն կամ ծավալների սահմանափակության խնդիր Նոր տեխնոլոգիաներին անցնելու սոցիալ-հոգեբանական սահմանափակումները
ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	ՍՊԱՌՆԱԼԻՔՆԵՐ
<ul style="list-style-type: none"> Զարգացման տեմպերի արագացման ինարավորություն զարգացող տնտեսություն ունեցող երկրների համար, Ազգային թվային արժույթի ստեղծումը, Տնտեսական գործունեության ընդլայնման ինարավորություն առանց ֆինանսական սահմանափակումների 	<ul style="list-style-type: none"> Զափազանց խիստ իրավական կարագավորումներ և սահմանափակումներ, Կիբեռանվտանգության ռիսկեր, Շուկայական մանհպովացիաներ և ներդրումային ռիսկեր, Տեխնոլոգիաների արագ հնացում

Բլոքեյնների և կրիպտոարժույթների ուժեղ և թույլ կողմերը, ինարավորություններն ու սպառնալիքները ազգային դրվեսության համար

ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Եզրակացություն և առաջարկություններ

Կատարված հետազոտության արդյունքում կատարվել են հետևյալ եզրակացություններն ու առաջարկությունները.

- Համապատասխանեցնել կրթությունը ժամանակակից տեխնոլոգիական պահանջներին, խթանել բլոքեյնի և կրիպտոարժույթների ոլորտների մասնագետների պատրաստումը՝ ժամանակակից մարտահրավերներին դիմակայելու և տնտեսության զարգացումը ապահովող մասնագետներ պատրաստելու համար, ովքեր տիրապետելով համապատասխան գիտելիքների, հմտությունների և կարողությունների, կարողանան աջակցել տեխնոլոգիաների զարգացմանն ու կիրառմանը:
- Visa-ն և Mastercard-ը համագործակցում են տարբեր կրիպտոարժությային պլատֆորմների հետ՝ առաջարկելով կրիպտո-դեբետային քարտեր, որոնք թույլ են տալիս օգտագործել կրիպտոարժույթները առօրյա գնումների համար: Քանի որ Հայաստանում արդեն իսկ կան ընկերություններ, որոնք զբաղվում են քարտերի թողարկմամբ, մենք առաջարկում ենք թողարկել քարտեր՝ շեշտը դնելով ցածր միջնորդավճարների և գլոբալ հասանելիության վրա, ինչը կիրանի ֆինանսական, տեխնոլոգիական և առևտրային ոլորտները: Նախնական այս փոփոխությունը հնարավորություն կտա օգտագործել կրիպտոարժույթները առօրյա գործարքներում և տեղի կունենա մասսայական տեղայնացում (mass adoption):
- Կզարգանան բանկային ենթակառուցվածքները: Քարտերի օգտագործումը հնարավորություն կտա իրական ժամանակի փոխարժեքներով կրիպտոարժույթների փոխանակմանը տեղական արժույթներով, որը առաջ կբերի տեղական փոխարժեքի ինտեգրացիայի և ճանաչման:
- Մենք ապրում ենք բարդ ժամանակաշրջանում, որտեղ անվերահսկելի են դարձել գեներացվող տեղեկատվության ծավալաները և, հետևապես, դրա պաշտպանությունը, հատկապես՝ պատերազմող երկրներում: Տեղեկատվության պահպանության համար բլոքեյն տեխնոլոգիաների ներդրումը կարող է հեղափոխական դեր ունենալ:
- Բլոքեյն տեխնոլոգիաների և կրիպտոարժույթների կիրառումը կբարելավվի միջազգային առևտուրը, տուրիզմը և հյուրանոցային բիզնեսը՝ ներգրավելով ավելի շատ հաճախորդներ և խթանելով նորարարական մոտեցումները:

Այսպիսով՝ բլոքեյն տեխնոլոգիան և կրիպտոարժույթները տնտեսությունը հեղափոխելու ներուժ ունեն՝ բարձրացնելով թափանցիկությունը և խթանելով ֆինանսական ներգրավվածությունը, սակայն մարտահրավերների հաղթահարումը, ինչպիսիք են՝ անկայունությունը, ֆինանսական և տեխնոլոգիական ռիսկերը, կարևոր է դրանց արդյունավետ ընդունման համար:

ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Գրականության Ցանկ

1. Tapscott, D. & Tapscott, A. (2016). *Blockchain Revolution: How the Technology Behind Bitcoin Is Changing Money, Business, and the World*. Penguin, 384 p.
2. World Economic Forum. (2020). *Global Future Council on Cryptocurrencies: Singapore Case Study*. Geneva, 38 p.
3. Stefan Goldbach and Volker Nitsch, “Cryptocurrencies and capital flows: evidence from El Salvador’s adoption of Bitcoin”, Published online: 30 Aug 2024, <https://doi.org/10.1080/13504851.2024.2394201>, (October 10, 2024).
4. Satoshi Nakamoto, (2008). Bitcoin: A Peer-to-Peer Electronic Cash System” - <https://bitcoin.org/bitcoin.pdf>, (October 10, 2024).
5. Kartik Hosanagar and Kevin Wernach, “How the Blockchain Will Impact the Financial Sector”, <https://knowledge.wharton.upenn.edu/article/blockchain-will-impact-financial-sector/>, (October 10, 2024).
6. Ռահուլ Նամբիամպուրաթ (Rahul Nambiarapurath), Քայլ Բեյրդ (Kyle Baird), «Սալվադորի գրոսաշրջությունը 30%-ով աճել է այն բանից հետո, եթե Bitcoin-ը դարձավ օրինական վճարամիջոց», 2022, https://beincrypto.com/el-salvador-tourism-increases-30-bitcoin-legal-tender/?utm_source=chatgpt.com, (10 հոկտեմբերի, 2024):
7. Միկայա Ա. (Mikaia A.), «1 Bitcoin օրական. Սալվադորը մեծ խաղաղույթներ է կատարում 162 նոր մետաղադրամով», 2024, https://www.cointribune.com/en/1-bitcoin-per-day-el-salvador-bets-big-with-162-new-coins/?utm_source=chatgpt.com (10 հոկտեմբերի, 2024):

THE IMPACT OF BLOCKCHAIN AND CRYPTOCURRENCY IN VARIOUS SECTORS OF THE NATIONAL ECONOMY

Karine Sargsyan

PhD in Economics, Associate Professor

EUA, Chair of Management

karine@eua.am

Hayk Daghuns

Student

EUA, Faculty of Management and Marketing

haykdaghuns@gmail.com

Abstract

Currently, blockchain technologies and cryptocurrencies are transforming the way national economies operate and evolve, offering opportunities for fast, secure, transparent, and immutable information exchange. They are being used across all sectors of the economy—including the financial

ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

system, education, electoral processes, tourism, and various industries—contributing to greater operational efficiency and trust.

The integration of cryptocurrencies into the economy creates opportunities to strengthen financial inclusion, facilitate international transactions, and promote monetary independence. Examples from El Salvador and Argentina demonstrate that with proper governance and regulation, cryptocurrencies can become tools for economic stability and development. At the same time, technological risks and the need for clear legal frameworks are being increasingly emphasized.

It is undeniable that the use of blockchain and cryptocurrencies can significantly influence the shaping of future economies, provided that investments and innovations are guided by responsible and forward-looking policies.

Such an approach also stimulates the creation of new jobs, the development of innovative ecosystems, and the active involvement of the private sector—contributing to economic growth and social stability. Moreover, it offers opportunities to enhance digital literacy, introduce new business models, and foster international cooperation.

Keywords: Financial technologies (fintech), Blockchain, Cryptocurrencies, Decentralization, Digital currency, Digital transformation.

Ներկայացվել է՝ 10.04.2025թ.
Ուղարկվել է գրախոսման՝ 22.04.2025թ.